Եռաբլուրը դեկտեմբերի 16-ին կրկին մարդաշատ էր, եւ հակասական էին տրամադրությունները: Հայոց հերոսների գերեզմանատանը ամփոփված երկու նահատակների՝ Արթուր Ղարիբյանի եւ Վարդան Բախչյանի շիրիմներին էին այցելել կուսակցական եւ մարտական ընկերները, հարազատները... Արթուրի ծննդյան օրն էր, Վարդանի՝ նահատակության, որ իր կուսակից մարտական ընկերների՝ էջմիածինցիներ Գագիկ Գրիգորյանի եւ Վաչե Ռուստամյանի հետ զոհվել էր 1991-ին Արցախի Հասանաբադ գյուղի մատույցներում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆՅԱՆ

Համեստ, կարգապահ ու գաղափարական

Մի տեսակ կաղապարված նույնօրինակ բնորոշումների, բնութագրումների ցանկ կա, որով գնահատում ենք հերոսամարտի մասնակիցներին, նահատակներին: Գերադրական միեւնույն աստիճանի այդ տողերը ընդհանրացում են բոլորին, բայց նրանցից ամեն մեկն անհատ էր, մի ուրույն աշխարհ, մի յուրօրինակ ինքնություն: Այդպիսին եմ ես ճանաչել Արթուր Ղարիբյանին Դուդուլին: Դեկտեմբերի 16-ին նրա ծննդյան օրը, Եռաբլուրում հինգ նորագիրների ՀՅԴ շարքերն անցնելու երդման արարողություն եղավ, որը ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ Գեղամ Մանուկյանի բնորոշմամբ «խորհրդանշական է եւ ցույց է տալիս, որ Արթուրի եւ մյուսների գործը կիսատ չի մնա»:

Այնուհետեւ տեղի ունեցավ Արթուր Ղարիբյանի թանգարան-ցուցասրահի բացումը: Այստեղ էլ նրա մարտական ընկերներն էին, ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամներ, մտավորականներ, մշակույթի նախարարության ներկայացուցիչներ եւ, իհարկե, ազատամարտիկի ծնողներն ու հարազատները:

Ցուցասրահում Արթուր Ղարիբյանի գեղարվեստական ստեղծագործություններն էին քանդակներ, գեղանկարչական կտավներ, էսքիզներ, նաեւ մարտական հագուստը, ստացած շքանշանները, ցուցակները զինապահուստի, որ հենց Արթուրի ջանքերով ու մասնակցությամբ են ժամանակին տեղափոխվել Արցախ: Եվ այս ամենի ներդաշնակ համադրումը ապշեցուցիչ էր: Ճիշտ այնքան, որքան ինքն էր իր մեջ ներդաշնակորեն համադրում արվեստագետն ու ազատամարտիկը:

Նրա հետ կարող էիր երկար-երկար զրուցել արվեստի ու գրականության բարձրագույն արժեքների մասին: Այստեղ էլ չափանիշները, ինչպես այլ հարցերում, ճշգրտված էին ու կայուն: Զարմացնում էին համաշխարհային մշակութային ժառանգության նրա իմացությունն ու դատողությունները: Բայց ավելի զարմանալի էր, որ նման արվեստային խոսակցությունը կարող էր ընդմիջվել զենքի ու պա-



տերազմի մարտավարության մասին դարձյալ չափազանց հետաքրքիր զրույցներով: Այդպես ապրեց նա ամբողջ կյանքը: Մեկ ուրիշի դեպքում դա կարող էր անձի երկփեղկվածություն թվալ: Արթուրի նկարագրում չկար բաժանում, այլ կար արվեստագետի ու գաղափարական մարտիկի հրաշալի ամբողջություն:

Արշավիր Շիրակյանի «Կտակն էր նահատակներուն» գրքի նախաբանում մեծ վրիժառուի մասին կա երեք բառանոց մի ծեւակերպում, որը եւ ինքնին չափազանց խոսուն ու ճշգրտորեն բնորոշում է նաեւ Արթուր Ղարիբյանին. համեստ, կարգապահ ու գաղափարական:

Բազմաթիվ անգամներ, անգամ կենցաղային դրվագներում, ականատես եմ եղել, թե ինչպես է համեստաբար զիջել ընկերներին, կամավոր մտել բեռան տակ, ուրիշի հոգսը դարձրել սեփականը:

Ցուցասրահի բացման ժամանակ գեներալ Արկադի Տեր- Թադեւոսյանի գնահատականներն էլ այս համատեքստում էին:

- Հայրենիքի պահանջն էր, որ Արթուրն ու նրա նմանները, որոնք եւ շատ էին, ե քիչ, դուրս եկան մարտի: Ես նրան ճանաչել եմ. եւ նա բարձր բարոյական անձնավորություն էր:

Ազատամարտը դեռ նոր-նոր էր սկսվում, եւ մի «մարտիկից» մյուսին ուղղված այսպիսի հորդոր լսեցի.

- Ի՞նչ գործ ունես Դուդուլի հետ: Նրա հետ ոչ մի բանի չես հասնի:

Այս տեսակետի կրողը ճիշտ էր: Ճիշտ էր իր նկատառումներով: Իրեն հարկավոր էր քիչ նվիրումով շատ բանի հասնել եւ հասավ: Կամաց-կամաց իր շուրջը ստեղծեց ազատամարտիկի պատմություններ եւ այժմ էլ բարձր պաշտոն է զբաղեցնում: Սակայն դեռ այն ժամանակ զգացել էր Արթուրի նվիրումի ու գաղափարականության անմնացորդությունը, որը խորթ էր իրեն. նպատակներն ու ճանապարհներն էին տարբեր: Դեռեւս այն ժամանակ էր զգացել դաշնակցական մարտիկի ու իր նկարագրի հակասությունը: Այս երեւույթը նույնպես Կոմանդոսը հրաշալի ծեւակերպեց:

- Արթուրը բարձր բարոյական անձնավորություն էր, բայց ափսոս, որ ազատամարտիկի ընդհանուր կերպարը ժողովրդի մեջ միայն Արթուրով ու նրա նմաններով չծեւավորվեց: Շատ բախտախնդիր շահամոլներ ստվեր գցեցին ժողովրդական ընդհանուր ընկալման մեջ:

Արթուրի մարտական ընկերներից Արմեն Եղյանը Շուշիի ժայռերից պոկած մի փոքրիկ բեկոր էր բերել եւ հանձնելով թանգարանին հուսաց, որ այստեղ պիտի ավելանան քարեր ազատագրվելիք այլ քաղաքներից էլ: